

**ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ**  
**ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ**

ՀՏԴ 334.761

**Ա.Բ. ԱՍԼԱՆՅԱՆ, Ն.Կ. ՄԱՆԱՍՅԱՆ**

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ**  
**ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՄՈԴԵԼԻ ՄՇԱԿՈՒՄԸ**  
**(Գյումրի)**

Ցուցանիշների համակարգի մշակման հիման վրա կատարվել է կլաստերների ձևավորման մոդելների համեմատական վերլուծություն: Մասնավորապես, այս նպատակին հասնելու համար ուսումնասիրությունը կատարվել է նորարարական կլաստերների ձևավորման արտասահմանյան փորձի ուսումնասիրման ճանապարհով:

**Առանցքային բաներ.** նորարարական կլաստերներ, կլաստերի զարգացում, կլաստերային միջավայր, թեթև արդյունաբերություն:

**Ներածություն:** Վերջին տարիներին նկատվում է շուկաներում ապրանքների և ծառայությունների բազմազանության և համալիրության ավելացման միտում՝ դրանց կենսացիկլի կրճատման և միջազգային մրցակցության ավելացման պայմաններում: Տարատեսակ արդյունաբերական շուկաների ներկայիս բարձր համակենտրոնացումը ընկերություններին արդեն չի տալիս բացառապես արտադրական տեխնոլոգիաների միջոցով մրցակցային առավելությունների հասնելու հնարավորություն: Այս միջոցառումների հետ կապված ընկերությունները և ձեռնարկությունները զգում են զարգացման արդյունավետ տեմպերի մեծ պահանջ [1]:

Հայաստանում դա կատարվում է նորարարական գործունեությունը խթանող պետական աջակցության տարատեսակ ծրագրերի միջոցով: Որպես այս ամենի հետևանք հատուկ ուշադրություն է դարձվում կլաստերին և կլաստերային քաղաքականությանը, որը կենտրոնացվում է դրանց ստեղծման գործընթացի և գործունեության ուսումնասիրման վրա, քանի որ ընկերությունների և ձեռնարկությունների զարգացման տվյալ գործիքը հանդես է գալիս շուկայում որպես առավել արդյունավետ և կատարյալ:

Հիմնական խոչընդոտը հստակ իմացության բացակայությունն է, թե հատկապես ո՞րն է նորարարական կլաստերի ձևավորման ու գործունեության կազմակերպման առավել լավ տարբերակը: Ելնելով ասվածից՝ աշխատանքի նպատակն է ցուցանիշների համակարգի մշակման հիման վրա կլաստերների ձևավորման մոդելների համեմատական վերլուծությունը:

**Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը:** Ցուցանիշների համակարգի մշակման հիման վրա կլաստերների ձևավորման մոդելների համեմատական վերլուծության կատարման նպատակով ձևակերպվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- վերլուծել նորարարական կլաստերների արտասահմանյան և ռուսաստանյան փորձը;

- ցուցանիշների համակարգի հիման վրա մշակել մոդել՝ նորարարական կլաստերի ձևավորման համեմատական վերլուծության համար;

- մշակել մեր տարածաշրջանում նորարարական կլաստերի ձևավորման մոդելների կիրառման գծով առաջարկություններ:

Եթե առանձնացնենք կլաստերների բնութագրիչ ցուցանիշների ամբողջական համակարգ, ապա այն կրաժանենք հետևյալ հիմնական հատվածների [2,3].

**1. Կլաստերի միջավայր:** Ներկայացնում են տարածաշրջանի գործարար միջավայրի ընդհանուր ցուցանիշները, որոնք արտադրական կազմակերպությունների (ձեռնարկությունների) տեղաբաշխվածության տեսանկյունից բնութագրում են տարածքի գրավչությունը:

**2. Կլաստերի շարժիչ ուժեր:** Դրանք ռեսուրսային ցուցանիշներ են, որոնք անհրաժեշտ են կլաստերների ձևավորման համար (օրինակ՝ մարդկային ռեսուրսներ, գիտական նվաճումներ, փոխներգործության կապուղիներ և այլն):

**3. Կլաստերի զարգացում:** Ցուցանիշներ, որոնք բնութագրում են կլաստերավորման ընթացիկ գործընթացները (օրինակ՝ ձեռնարկությունների այն զանգվածը, որը միտված է համագործակցությանը, կազմակերպություններին և այլն):

**4. Կլաստերի արդյունքներ:** Արդյունքային ցուցանիշներ, որոնք արտացոլում են կլաստերի ազդեցությունը նորարարական ակտիվության վրա, ցանցային փոխազդեցության զարգացման գործընթացները և տարածաշրջանի մրցունակությունն ամբողջությամբ:

Առաջին երեք բլոկները մուտքային ինդիկատորներն են, իսկ վերջին բլոկը՝ արդյունքային:

Դասական մոտեցմամբ մրցունակ է համարվում այն երկրի տնտեսությունը, որի տնտեսավարող սուբյեկտներն ազատ մրցակցության պայմաններում արտադրում են այնպիսի ապրանքներ ու ծառայություններ, որոնք բավարարում են համաշխարհային շուկայի պահանջները:

Կլաստերի մրցունակության բարձրացման համար կարևոր է հարուստ կենսափորձ և պահանջներ ունեցող տեղական սպառողների առկայությունը, որոնց պահանջները առաջ են անցնում այլ շուկաների պահանջարկից և հանդիսա-

նում են «փորձաքար»՝ նոր ապրանքի համաշխարհային պահանջարկի համար: Կլաստերում փոխազդեցությունների համակարգային արդյունքի հայտնվելը պայմանավորում է արտադրողականության բաժրացումը՝ տեխնոլոգիական և կազմակերպական բնագավառներում նորարարությունների հաշվին, և խթանում է նոր բիզնեսների առաջացումը, որոնք ընդլայնում են կլաստերի սահմանները:

Կլաստերները ներկայացնում են ոչ միայն ընդհանուր բնութագրերով ու նպատակներով օժտված ձեռնարկությունների՝ տարածականորեն առանձնացած խումբ: Դրանք միշտ մշակված և ներդրված են այնպես, որ հաշվի են առնված երկրի, տարածքի, բնակչության և այլնի ցանկացած առանձնահատկությունները:

Կլաստերների ձևավորման արտասահմանյան փորձն ուսումնասիրելիս կարելի է ուշադրություն դարձնել Իտալիայի փորձին: Այստեղ տեղակայված են մոտավորապես 200 արդյունաբերական շրջաններ, որտեղ կենտրոնացած են բազմաթիվ փոքր ու միջին ձեռնարկություններ: Ընդ որում, հայտնի է, որ փոքր ընկերություններին հաջողվում է զբաղեցնել խոշոր ընկերություններից ազատ շուկայական խոռոչները, դրա շնորհիվ նրանք ստեղծում են աշխատատեղեր, իսկ խոշորագույն ձեռնարկությունների հետ սերտ համագործակցության հաշվին փոքր ֆիրմաները ստանում են հասանելիություն դեպի արտաքին շուկաներ: Ավելին, իտալական արդյունաբերական շրջաններն ունեն ևս մեկ բացառիկ առավելություն, մասնավորապես՝ կառավարման փոքր ծախսերը: Հաճախ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ի սկզբանե այս կամ այն բիզնեսը ընտանեկան արիեստ է, այսինքն արտադրության ոչ մեծ ծավալը կարելի է պահել հսկողության տակ՝ առանց ավելորդ ծախսերի:

Առանձին ուշադրության է արժանի նաև Չինական Ժողովրդական Հանրապետությունը, որում նորարարական կլաստերի տակ ընդունված է ենթադրել ընկերությունների, ձեռնարկությունների, բուհերի, հիմնադրամների և նորարարական շղթան կազմող այլ մասնակիցների դաշինքները՝ նորարարական ապրանքների և ծառայությունների ստեղծման գործընթացում միմյանց ընդհանուր աջակցման համար:

Եթե խոսենք Հայաստանի մասին, ապա այստեղ անհրաժեշտ է նշել, որ նորարարական կտրվածքով երկիրը դեռևս տեղ ունի զարգացման, մասնավորապես՝ դրա համար կառավարությունը ակտիվորեն պետք է մշակի անհրաժեշտ ռազմավարություն, որի իրականացումից հետո սպասվում է նորարարական ապրանքների ու ծառայությունների պահանջարկի աճ, ինչպես նաև նորարարական կլաստերի գործունեության արդյունավետության բարձրացում:

Քանի որ Շիրակի մարզը հանդիսանում է թեթև արդյունաբերության կենտրոն, և ներկայումս էլ այստեղ գործում են այս ոլորտի բազմաթիվ ձեռնարկություններ, ապա նախընտրելի է կլաստերների ձևավորումը հենց դրանց միջև:

Կլաստերը կարող է ձևավորվել ինչպես տեխնոլոգիական գործընթացի տարբեր փուլեր իրականացնող, այնպես էլ տարբեր արտադրատեսակների թողարկման մեջ մասնագիտացած ձեռնարկությունների միավորմամբ:

**Հետազոտության արդյունքները:** Շիրակի մարզում տեքստիլ նորարարական կլաստերի ձևավորման մոդելի համեմատական վերլուծություն անցկացնելու համար անհրաժեշտ է որոշել, թե կլաստերներից որոնք են հանդիսանում առավել հաջողված [1]:

[2] աշխատանքում նշվում է, որ այս կամ այն կլաստերի արդյունավետության վերլուծությունը շատ նման է տնտեսագիտական ինստիտուտի գործունեության մասշտաբների գնահատմանը՝ որևէ ճյուղի կտրվածքով: Այլ խոսքով, եթե ուսումնասիրենք կլաստերը որպես առանձին գործող միավոր, ապա արդյունքում հնարավոր կլինի վերլուծել կլաստերի արդյունավետությունն ամբողջությամբ՝ դիտարկելով այն որպես «վեկտորական մեծություն»: Հետազոտության արդյունքում ընտրվել է հետևյալ մեթոդիկան.  $K_1$  -ը ճյուղում զբաղվածների ընդհանուր թվի մեջ կլաստերի մասնաբաժինն է;  $K_2$  -ը՝ ճյուղի հիմնական ֆոնդերի ընդհանուր ծավալում կլաստերի մասնաբաժինը;  $K_3$  -ը՝ ճյուղի համախառն արտադրանքի արտադրության մեջ կլաստերի մասնաբաժինը [3, 4, 5 ]:

Ստացվում է, որ վերը նշված ցուցանիշներն արտացոլում են ոչ միայն կլաստերի տարատեսակ բնութագրերը, այլև մի քանի մակրոտնտեսական գործոններ, իսկ որպես այս կամ այն ճյուղում կլաստերի մոտավոր մասնաբաժինը հաշվարկող բանաձև ընդունված է հետևյալը [2]՝

$$K = \frac{K_1 + K_2 + K_3}{3} * 100\% : \quad (1)$$

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ բանաձև (1)-ում բերված են ոչ բոլոր ցուցանիշները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տարբեր ժամանակներում միջազգային պրակտիկայում ընդունված է եղել ձևափոխել բանաձևը՝ ներառելով և բացառելով նրանից այս կամ այն գործակիցները: Ներկայումս վերջին ձևափոխությունից հետո բանաձևն ընդունել է (1) տեսքը:

Բացի ճյուղում կլաստերի ներկայացուցչության մասնաբաժնի ինտեգրալային միջին ցուցանիշից, կլաստերը կարելի է գնահատել նաև այլ ցուցանիշներով ևս: Օրինակ.

1. Ըստ սոցիալական արդյունավետության ցուցանիշի, որը որոշվում է միջոցառման անցկացման վրա կատարված ֆինանսական ներդրումների համախառն ծավալի և միջոցառման արդյունքի սոցիալական արդյունքի հարաբերությամբ.

$$\Theta = \frac{E}{B}, \quad (2)$$

2. «երեք E»-երի բանաձևով. [2].

$$\Theta = E_1 * E_2 * E_3, \quad (3)$$

որտեղ  $E_1$  -ը արդյունավետության գործակիցն է, որն արտահայտված է որպես միջոցառման վրա կատարված ընդհանուր եկամուտների հարաբերությունը ծախ-

սերին,  $E_2$  –ը՝ նախագծի ֆինանսական օգուտի գործակիցը, այսինքն անցկացվող միջոցառման արդյունքի հարաբերությունն է նրա վրա ծախսվող ֆինանսական ռեսուրսներին, իսկ  $E_3$ –ը՝ (2) բանաձևով հաշվարկված գործակիցը, որը պատասխանատու է նախագծի սոցիալական բաղադրիչի համար:

3. Ըստ կլաստերի գործունեության իրական արդյունքների հարաբերակցության այն խնդիրներին, որոնք ի սկզբանե դրված են եղել նրա առջև [2].

$$k = \left( \frac{\vartheta}{\vartheta_0} - 1 \right) * 100\%, \quad (4)$$

որտեղ  $\vartheta$ –ը կլաստերի գործունեության արդյունքներն են (փաստացիները բաժանվում են սպասվողների վրա): Եթե դիտարկվող գործակիցը մեծ է 0-ից, ապա նորարարական կլաստերը ոչ միայն կատարել, այլ նաև գերակատարել է խնդիրների պլանը: Եթե այն փոքր է 0-ից, ապա կլաստերը չի հասնում ահրաժեշտ արդյունքին, իսկ եթե հավասար է 0-ի, ապա ստացվում է, որ կլաստերը հստակ համապատասխանում է առաջադրված սպասելիքներին:

4. Ըստ կլաստերի ձևավորման վրա կատարված ֆինանսական ծախսերի մակարդակն արտացոլող ցուցանիշի [2,5]:

$$B = (N + D) - R, \quad (5)$$

որտեղ  $B$ –ն, ըստ էության, այս կամ այն կլաստերում կատարված ներդրումների արդյունքում ստացված շահույթն է,  $D$ –ն՝ կլաստերի ցանկացած տարրերի օգտագործումից ստացվող երկրորդական եկամուտները,  $N$ –ը՝ կոնկրետ կլաստերի կազմի մեջ մտնող ընկերությունների՝ պետական բյուջե վճարած հարկերը,  $R$ –ը՝ կլաստերի վրա կատարվող ամբողջական ծախսերը:

Որքան մեծ է ստացվում  $B$ -ի մեծությունը, այնքան ավելի արդյունավետ է կլաստերի գործունեությունը: Համապատասխանաբար, եթե  $B$  ցուցանիշը փոքր է 0-ից, ապա հիմնադիրները իրենց բյուջեից ներդնում են ավելի շատ, քան կարող է հետ վերադարձվել [5]:

#### **Եզրակացություններ.**

1. Կարելի է եզրակացնել, որ տարածաշրջանը, որն իր քաղաքականության մեջ օգտագործում է կլաստերային մոտեցումը, անցնում է տնտեսական զարգացման նոր մակարդակի, քանի որ միջազգային շուկաներում դառնում է ավելի մրցունակ՝ շնորհիվ բարձր տեխնոլոգիական նորարարական արտադրանքի և ծառայությունների արտադրության:

2. Կատարված հետազոտությունների շնորհիվ կարելի է փաստել, որ կլաստերային քաղաքականությունը դրական ազդեցություն ունի տեքստիլ նորարարական կլաստերի ձևավորման և արդյունավետ գործունեության վրա:

3. Կատարվել է կլաստերների ձևավորման մոդելների համեմատական վերլուծություն:

4. Նորարարական կլաստերների անմիջական համեմատության համար ընտրվել է կլաստերի գործունեության արդյունավետության ցուցանիշը:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. **Մանասյան Մ.Գ., Սարգսյան Լ.Մ.** Արտադրության ճյուղային-տարածքային կառուցվածքի կատարելագործման հիմնախնդիրները անցումային տնտեսություն ունեցող երկրներում // Ֆինանսներ և էկոնոմիկա.- 2015.- 3-4.- էջ 175-176:
2. **Тюкавкин Н.М.** Инновационно-технологические кластеры стран–членов МЦНТИ (Информационный материал). / Международный центр научной и технической информации, февраль 2013 г. // Электронный материал: Методы оценки эффективности функционирования кластеров в промышленности // Основы экономики, управления и права. – 2013. - №3(9). – 46с.
3. Обзор инновационных кластеров в иностранных государствах / Министерство экономического развития Российской Федерации.- 2011, май. – 503с.
4. **Руднева П.С.** Опыт создания структурных кластеров в развитых странах // Экономика региона.–2007. - №18, часть 2. - С.9-15.
5. **Портер М.** Конкурентная стратегия: методика анализа отраслей и конкурентов.— М.: «Альпина Паблишер», 2011. – 453 с.

**Ա.Բ. ԱՏԼԱՆՅԱՆ, Ն.Կ. ՄԱՆԱՏՅԱՆ**

#### **РАЗРАБОТКА КЛАСТЕРНОЙ МОДЕЛИ РАЗВИТИЯ ЛЕГКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В ШИРАКСКОМ РЕГИОНЕ**

На основе разработки системы показателей произведен сравнительный анализ моделей создания кластеров. В частности, для достижения этой цели исследование проводилось на основе анализа международного опыта создания кластеров.

**Ключевые слова:** новаторские кластеры, развитие кластера, кластерная среда, легкая промышленность.

**A.B. ASLANYAN, N.K. MANASYAN**

#### **DEVELOPING A CLUSTER MODEL OF LIGHT INDUSTRY IN SHIRAK REGION**

Based on the development of the indicator system, a comparative analysis of the models for creating clusters is made. In particular, to achieve this goal, the study was carried out on the basis of the analysis of international experience in creating clusters.

**Keywords:** innovative clusters, cluster development, cluster environment, light industry.